ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

30 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Սիրակ Հովակիմյանը, Գարեգին Մարգարյանը, Ժորա Մարտիրոսյանը, Արամ Մկրտչյանը

Քաղաքապետի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Տիգրան Պողոսյանը

Նիստը արձանագրում էր՝ ը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի՝ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով՝ ***ավագանին որոշում է՝***

Հաստատել Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 30-ի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին.

2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին.

3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձեվով օտարելու թույլտվություն տալու մասին.

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 149-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձեվով օտարելու թույլտվություն տալու մասին.

6. Համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման վերաբերյալ.

7. Կոտայքի մարզի Գառնի համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու վերաբերյալ:

8. Հաստատել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքը (Գառնի, Գեղադիր, Գեղարդ, Գողթ, Հացավան և Ողջաբերդ բնակավայրեր) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-9 համակցված տարածական պլանավորման նախագիծը՝ գլխավոր հատակագծի և գոտևորման մասերով

9. Գառնի համայնքի ավագանին «Գառնի համայնքի Գեղարդ գյուղից 2.5 կմ հյուսիս-արեվմուտք տարածքում «ԿՐՈՒՍՏԱ» ՍՊԸ-ն ցանկանում է ընդերքօգտագործման իրավունք ստանալ շուրջ 8 հա մակերեսով ընդերքի տեղամաս շահագործելու» համաձայնություն տալու մասին

10. Հրատապ բաց մրցույթ անցկացնելու մասին

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի. ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Գառնի համայնքի սեփականություն համարվող հողերը օտարել հրապարակային սակարկումների միջոցով սահմանելով մեկնարկային գին համայնքի կարիքների համար համաձայն հավելվածի: 2. Աճուրդը տեղի կունենա 2024 թվականին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 120-Ա/

Լսեցին

ՀԱՍՏԱՏԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԸ (ԳԱՌՆԻ, ԳԵՂԱԴԻՐ, ԳԵՂԱՐԴ, ԳՈՂԹ, ՀԱՑԱՎԱՆ և ՈՂՋԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ) ՆԵՐԱՌՈՂ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԿՈՏԱՅՔ-9 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ՝ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ և ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՄԱՍԵՐՈՎ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.4-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերտ մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 8-ի թիվ 2-9 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության կառավարության2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման» կարգի 5-րդ և 23-րդ կետերի դրույթները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով ***Գառնի համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքը (Գառնի, Գեղադիր, Գեղարդ, Գողթ, Հացավան և Ողջաբերդ բնակավայրեր) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-9 համակցված տարածական պլանավորման նախագիծը՝ գլխավոր հատակագծի և գոտևորման մասերով, համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Գառնի համայնքի ավագանու 26 հուլիսի 2024թվականի << Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կողմից ներկայացված միկրոռեգիոնալ փաստաթուղթը հաստատելու մասին>> N 110-Ա որոշումը

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 122-Ն/

Լսեցին

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ «ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՐԴ ԳՅՈՒՂԻՑ 2.5 ԿՄ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՈՒՏՔ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ԿՐՈՒՍՏԱ» ՍՊԸ-Ն ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՍՏԱՆԱԼ ՇՈՒՐՋ 8 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍ ՇԱՀԱԳՈՐԾԵԼՈՒ» ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 28.12.2023 թվականի N 2343-Ն որոշմամբ և հիմք ընդունելով հանրային լսումների արձանագրությունը համայնքի ավագանին որոշում է՝

1. Գառնի համայնքի Գեղարդ գյուղից 2.5 կմ հյուսիս-արևմուտք տարածքում «ԿՐՈՒՍՏԱ» ՍՊԸ-ն ցանկանում է ընդերքօգտագործման իրավունք ստանալ շուրջ 8 հա մակերեսով ընդերքի տեղամաս շահագործելու համար տալ համաձայնություն :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 123-Ա/

Լսեցին

ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, <<Գնումների մասին>> օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Գառնի համայնքի Գառնիի համայնքապետարանի կարիքների համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման նախապատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով գնման ձևը համաձայն <<Գնումների մասին>> օրենքի համայնքի գնումների պլանով նախատեսվել է բաց մրցույթ, ըստ որի մրցույթի հրավերը պաշտոնական կայքում հրապարակելու օրվանից մինչև պայմանագրի կնքման գործընթացը տևում է շուրջ 2 ամիս և հաշվի առնելով սուբվենցիայի ծրագրերի նախնական հայտերի լրամշակման հետ կապված ընթացքը , ***համայնքի ավագանին որոշում է***

Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Գառնիի համայնքապետարանի կարիքների համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման նախապատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով գնումը կատարելու հրատապ բաց

մրցույթի եղանակով, առաջարկելով նաև գնումների պլանում կատարելու համապատասխան փոփոխություններ:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 124-Ա/

Ավագանու անդամներ

ԱԼԻԿ ԱԼՈՅԱՆ

ՀՄԱՅԱԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԻՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՏԻՐԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՐՍԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ